ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. **Անունը, ազգանունը.**
   Արամ Խաչատրյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**
   Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության իրավաբանական վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**
   Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն, ք. Պեկին, ք. Դատոն, ք. Յանգաո
   31.07.2023թ.-ից 04.08.2023թ.

4. **Հրավիրող կողմը (առկայության դեպքում).**
   Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

- Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի տնօրենների խորհրդի տարեկան նիստ անցկացնելու համար,
- Հանդիպում ՉԺՀ տրանսպորտի նախարար Լի Սյաոպենի հետ,
- Հանդիպում «SINOCHEM HOLDINGS»Ի քլորալկալիների արդյունաբերության բիզնես ստորաբաժանման գլխավոր տնօրեն ՃՈՒ ԲԻՆԻ հետ:

6. **Քննարկված թեմաները (հարցերը).**

1.«SINOCHEM HOLDINGS»Ի քլորալկալիների արդյունաբերության բիզնես ստորաբաժանման գլխավոր տնօրեն Ճու Բինի հետ հանդիպման ժամանակ քննարկվել է համատեղ ձեռնարկության գործունեության ընթացիկ վիճակը, խնդիրները և զարգացման հեռանկարները, ուղղությունները: Նախարարը կարևորել է ընկերության հետ կապված խնդիրների արագ կարգավորման և ընկերության շահութաբերության ապահովման հարցը, բարձրացվել է նաև ձեռնարկությունում հայկական քվոտայով հաստիքների համալրման հարցը:

Պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ քննարկել և մշակել ձեռնարկության զարգացման ծրագիր:

2. Չինաստանի Ժողովրդական Հանրապետություն տրանսպորտի նախարար Լի Սյաոպենի հետ հանդիպման ժամանակ անդրադարձ է կատարվել «Միջազգային ավտոմոբիլային տրանսպորտի մասին» միջկառավարական համաձայնագրի կնքմանը:

Անդրադարձ է կատարվել ՀՀ-ում ենթակառուցվածքների շինարարությանը, մասնավորապես ճանապարհների, կամուրջների և թունելների կառուցման, վերակառուցման նախագծերում կարողություններ ունեցող չինական ընկերությունների ներգրավմանը:

Քննարկվել են միջազգային տրասնպորտային ուղիների զարգացմանը վերաբերող հարցեր:

3. Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի տնօրենների խորհրդի տարեկան նիստին քննարկվել է.

1. Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի կանոնադրության փոփոխության նախագծի քննարկում:
2. Հայկական կողմից հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի կանոնադրական կապիտալում որպես մտավոր սեփականություն ներդրված և չինական այլ ձեռնարկության կողմից գողացված՝ ՀՁ-ի կողմից ներկայացված դատական հայցի մասով ՀՁ-ի օգտին դատարանի որոշման կայացման արագացմանն ուղղված հայկական և չինական կողմերից անհրաժեշտ գործողություններ ձեռնարկելու հնարավորությունների քննարկում:
3. Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի 2022թ.-ի արտադրական և տնտեսական գործունեության, ֆինանսական հաշվետվության փաթեթների և պլանային ներդրումների, ինչպես նաև 2023թ.-ի արտադրական և տնտեսական գործունեության ծրագրի, ֆինանսական բյուջեի, նոր ներդրումների իրականացման հնարավորությունների վերաբերյալ քննարկում (որպես առանձնացված օրակարգային հարցեր):
4. Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի տնօրենների խորհրդի աշխատանքների բարելավմանն ուղղված միջոցառումների շրջանակներում ՀՁ-ի տնօրենների խորհրդի կողմից վստահված անձի կառավարման միջոցառումների նախագիծը հաստատելու վերաբերյալ քննարկում:
5. Արտաքին ընկերությունների համար Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի կողմից երաշխիքների կառավարման միջոցառումների քննարկում:
6. Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի պարտքերի կառավարման միջոցառումների քննարկում:
7. Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի կողմից արտաքին բարեգործական գործերի կառավարման միջոցառումների քննարկում:
8. Համաձայն հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի Տնօրենների խորհրդի 21.10.2019 թ.-ի 4-րդ գումարման 2-րդ լիագումար նիստի արձանագրության 6-րդ կետի ՀՁ-ի արտադրանքը (քլորոպրենային կաուչուկներ և կաուստիկ սոդա) հայկական կողմին վաճառքի համար քվոտաներ տրամադրելու հարցի քննարկում:
9. Համաձայն հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի Տնօրենների խորհրդի 21.10.2019 թ.-ի 4-րդ գումարման 2-րդ լիագումար նիստի արձանագրության 3-րդ կետի հայկական կողմից կադրերի պաշտոնի նշանակման հարցի քննարկում:

10. Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի բազայի հիման վրա և նրա ամբողջական սեփականության ներքո դուստր ձեռնարկություն ստեղծելու վերաբերյալ նախնական քննարկում:

7. **Հանդիպումները, ելույթները.**

1. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը «Sinochem Holdings»ի Քլորալկալիների արդյունաբերության բիզնես ստորաբաժանման գլխավոր տնօրեն Ճու Բինի հետ հանդիպմանը մասնակցել են նաև «Շանսի-Նաիրիտ» ՀՁ գլխավոր տնօրենը և այլ ներկայացուցիչներ: Նախարարը կարևորել է ընկերության հետ կապված խնդիրների արագ կարգավորման և ընկերության շահութաբերության ապահովման հարցը, բարձրացվել է նաև ձեռնարկությունում հայկական քվոտայով հաստիքների համալրման հարցը:
   Պայմանավորվածություն է ձեռք բերվել համատեղ քննարկել և մշակել ձեռնարկության զարգացման ծրագիր:
2. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարար Գնել Սանոսյանը հանդիպել է ՉԺՀ տրանսպորտի նախարար Լի Սյաոպենի հետ: Երկուստեք կարևորվել է ՀՀ-ի և ՉԺՀ-ի միջև կանոնավոր օդային հաղորդակցության կազմակերպումը, ինչպես նաև ՀՀ և ՉԺՀ տրանսպորտի ոլորտի համար պատասխանատու գերատեսչությունների միջև փորձի փոխանակումը, փոխադարձ այցերն ու փորձագետների ներգրավումը: Ընդգծվել է վերը նշված պայմանավորվածությունները կյանքի կոչելու համար անհրաժեշտ ջանքերի գործադրման անհրաժեշտությունը:
3. Հանդիպումներ տեղի ունեցան «Sinochem Holdings» քլոր-ալկալիական բիզնես բաժնի Գլխավոր տնօրեն, Պարտիական կոմիտեի (պարտկոմ) քարտուղարի տեղակալ պարոն Բին Չժուի և հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի տնօրենների խորհրդի նախագահ, Գլխավոր տնօրեն, պարտկոմի քարտուղար պարոն Սի Ցզինմինի հետ, որոնք իրենց հերթին հանդես եկան ելույթներով: Հայկական կողմից ելույթներով հանդես եկան ՏԿԵՆ նախարար Գ. Սանոսյանը և Չինաստանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Ս. Մանասարյանը: Կողմերը հանդես եկան ելույթներով, փոխանակվեցին մտքերով և առաջարկություններով:

8. Հանդիպումների ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի տնօրենների խորհրդի տարեկան նիստին ընդունվել է հետևյալ որոշումները և պայմանավորվածությունները.

1-ին կետի վերաբերյալ - հաստատվեց Հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի կանոնադրությունում համապատասխան փոփոխություններ կատարելու դրույթները, համաձայն որի համատեղ ձեռնարկության գործունեության ժամկետը սահմանվեց 29 տարի ՀՁ-ի ստեղծման պահից և կգործի մինչև 2033 թվականը:

2-րդ հարցի վերաբերյալ - որոշվեց, որ հայկական և չինական կողմերը հնարավորինս անհրաժեշտ և ակտիվ գործողություններ ձեռնարկեն ՀՁ-ի կողմից վերջինիս մտավոր սեփականության վերաբերյալ ներկայացված դատական հայցի մասով՝ այն ՀՁ-ի օգտին դատարանի որոշման կայացման ուղղությամբ: Չինական կողմը վստահեցրեց առավելագույնս իր ներուժը ներդնել այս գործի արդարացի և շուտափույթ լուծման գործընթացում, իսկ հայկական կողմը Չինաստանում Հայաստանի դեսպանության միջոցով օգտագործի իր դիվանագիտական միջոցները հարցն առավել ուշադրության կենտրոնում պահելով չինական բարձրագույն կառավարման համակարգի մարմիններում: Կողմերը ձեռնամուխ եղան հետևողական լինել այս գործընթացում և պարբերաբար փոխանակվեն համապատասխան տեղեկատվությամբ:

3-րդ հարցի վերաբերյալ - կողմերը պայմանավորվածություն ձեռք բերեցին, որ չինական կողմը հնարավորինս կարճ ժամանակահատվածում կներկայացնի հայկական կողմին աուդիտորական կազմակերպության կողմից իրականացված աուդիտորական եզրակացության կնիքով հաստատված տարբերակը, իսկ հայկական կողմն այն կներկայացնի թարգմանելու, որից հետո երկշաբաթյա ընթացքում կիրականացնի համապատասխան վերլուծություն և կներկայացնի իր կարծիքը ՀՁ-ի 2022թ.-ի արտադրական և տնտեսական գործունեության, ֆինանսական հաշվետվության փաթեթների և պլանային ներդրումների, ինչպես նաև 2023թ.-ի արտադրական և տնտեսական գործունեության ծրագրի, ֆինանսական բյուջեի, նոր ներդրումների իրականացման հնարավորությունների վերաբերյալ:

4-րդ հարցի վերաբերյալ - երկկողմ քննարկման արդյունքում չինական կողմը ընդունեց հայկական կողմի բոլոր դիտարկումները և առաջարկությունները, մասնավորապես՝ ՀՁ-ի տնօրենների խորհրդի կողմից վստահված անձին տրվող լիազորությունների շրջանակներում թույլատրվելիք գումարային միջոցների տնօրինման գումարների եռապատիկ իջեցման մասով կառավարման միջոցառումների օգտագործումը, իսկ հավելվածով ներկայացված մարմինների լիազորությունների շրջանակ բնութագրող համապատասխան փաստաթղթում աղյուսակի առկայությունը կողմերը կքննարկեն հեռակա կարգով: Ընդհանուր առմամբ կողմերը հաստատեցին նմանատիպ փաստաթղթի ընդունման անհրաժեշտությունը:

5-րդ, 6-րդ և 7-րդ հարցերի վերաբերյալ - ելնելով այն հանգամանքից, որ վերը թվարկված նախագծերը ներկայացվել են հայկական կողմին վերջին 10 օրվա ընթացում և այն խորը վերլուծության կարիք ունի, կողմերը պայմանավորվեցին, որ հայկական կողմը մեկ ամսվա ընթացքում կուսումնասիրի նշված փաստաթղթերի նախագծերը և իր դիտարկումներն ու առաջարկությունները կներկայացնի չինական կողմին: Վերջինիս արդյունքում կիրականացվի հեռակա քննարկում:

8-րդ հարցի վերաբերյալ - չինական կողմը բարձրաձայնեց հնարավոր դժվարությունները ՀՁ-ի արտադրանքի (քլորոպրենային կաուչուկներ և կաուստիկ սոդա) իրացման գործընթացում, որը բավականին լուրջ խնդիր է առաջացնում ՀՁ-ի համար, և խնդրեց հայկական կողմին աջակցելու վերջինիս արտադրանքի իրացման գործընթացին:

Հայկական կողմը ներկայացրեց իր պոտենցիալ հնարավորությունները ՀՁ-ի արտադրանքի իրացման ուղղությամբ և պատրաստակամություն հայտնեց հնարավորինս աջակցելու այդ գործընթացին, մասնավորապես՝ արտադրանքի շուկան ուսումնասիրելուց հետո և պոտենցիալ գնորդներ ներգրավելու իրական հնարավորությունների դեպքում չինական կողմին համապատասխան առաջարկ ներկայացնելու մասով:

9-րդ կետի վերաբերյալ - կողմերը վերահաստատեցին իրենց դիրքորոշումը հայկական կողմին քվոտայով վերապահված պաշտոններում բարձր և համապատասխան մասնագիտական ունակություններով անձանց նշանակման հարցը, որի արդյունքում կողմերի միջև պայմանավորվածություն ձեռք բերվեց առաջիկայում, որ հայկական կողմը ներկայացնի թեկնածուներ, որոնք կհամաձայնեցվեն չինական կողմի հետ և ՀՁ-ի տնօրենների խորհրդի որոշմամբ կհաստատվեն ներկայացված թեկնածուներին պաշտոնների նշանակումը:

10-րդ հարցի վերաբերյալ - չինական կողմը ներկայացրեց հարցը, որը չինական կողմի առաջարկով էր մտել օրակարգ: Հայկական կողմը առաջարկեց, որ չինական կողմը առավել հստակ և մանրակրկիտ ներկայացնի ՀՁ-ի կազմում դուստր ձեռնարկության ստեղծման նպատակը, ստեղծվելիք նոր ձեռնարկության կարգավիճակը և ակնկալվող արդյունքը: Նշված հարցադրումների արդյունքում չինական կողմն առաջարկեց հարցն օրակարգից հանել, որին և ընդառաջ հայկական կողմը համաձայնվեց:

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները:

Համաձայն «Շանսի Գրուպ բաժնետիրական Ս.Կ.» ընկերության և «Նաիրիտ 2» ՓԲԸ-ի միջև համատեղ ձեռնարկություն ստեղծելու մասին պայմանագրի 3-րդ հավելվածի 7-րդ գլխի 19-րդ հոդվածի դրույթների հայկական կողմը առաջարկությամբ հանդես եկավ չինական կողմին, մասնավորապես՝ «Sinochem Holdings» քլոր-ալկալիական բիզնես բաժնի գլխավոր տնօրեն Բին Չժուին և հայ-չինական «Շանսի-Նաիրիտ» ՀՁ-ի տնօրենների խորհրդի նախագահ, գլխավոր տնօրեն պարոն Սի Ցզինմինին Հայաստանում «Նաիրիտ գործարան» ՓԲԸ-ի բազայի վրա, համատեղ գիտահետազոտական և գիտահետազոտական արտադրական ձեռնարկության ստեղծելու հնարավորության վերաբերյալ: Հայկական կողմը ներկայացրեց համառոտ տեղեկատվություն առաջարկի պոտենցիալ հետաքրքրվածություն ներկայացնող ուղղությունների վերաբերյալ, ինչպես նաև ներկայացրեց որոշակի բիզնես վերլուծության արդյունքներ, մասնավորապես՝ Հայաստանում առաջնային քլոր-ալկալիական նյութերի արտադրության կազմակերպման ուղղությամբ: Համաձայն ներկայացվածի չինական կողմն առաջարկեց ներկայացնել <u>Բիզնես առաջարկ, որը չինական կողմը կուսումնասիրի և հետաքրքրության դեպքում այց կկազմակերպի Հայաստան՝ ներկայացված առաջարկին առավել մանրակրկիտ անդրադառնալու կապակցությամբ</u>:

Գործուղվող՝

Արամ Խաչատրյան